ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 162-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Դսեղ գյուղի բնակիչ Վոլոդյա Մարտիրոսի Եգանյանի դիմումը, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ 1493388,տրված 30.06.2004 թ. և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Վոլոդյա Մարտիրոսի Եգանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի, գ.Դսեղի (ծած.06-035-0015-0008-001) բնակելի տանը, մակերեսի չափը՝ 117,7 քմ և բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,14161 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ,3-րդ փողոց,13/1 բնակելի տուն>> հասցե:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2023թ. մայիսի 11-ի N 116-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. հունիսի 12
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 163-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 57 -րդ հոդվածի 8,9,10 կետերով և <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով՝

Որոշում եմ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնի անձնագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 12
ք.Թումանյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան
համայնքի ղեկավարի 2023 թվականի
հունիսի 12-ի N 163 որոշման

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմում ընդգրկված համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնը հանդիսանում է հանրային պաշտոնների համայնքային խմբի հայեցողական տեսակի պաշտոն:
2. Համայնքի ղեկավարի խորհրդականին «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով սահմանված կարգով պաշտոնին նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

3. անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին:
4.պատասխանատվություն է կրում օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, իր առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
5.լուծում է իր առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներն և ընդունում որոշումներ:
6.բացակայության դեպքում նրան փոխարինում է համայնքի ղեկավարի օգնականը՝ համայնքի ղեկավարի հայեցողությամբ:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

7. կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.
8.համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.
9. համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ, կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

10. աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների, աշխատակազմում հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարի, ինչպես նաև աշխատակազմի այլ աշխատողների հետ.
11. համայնքի ղեկավարի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս իր լիազորությունների շրջանակներում շփվում և հանդես է գալի սորպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության այլ համայնքների և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

12. Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմի ռազմավարական, կազմակերպական և մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

6.ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

13. ունի բարձրագույն կրթություն հանրային ծառայության առնվազն երեք տարվա կամ զբոսաշրջային ծառայությունների մատուցման,ղեկավարման,համակարգման առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ և լրացել է 25 տարին
14. ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հարկերի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աշխատանքային օրենսգրքի», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն.
15. ունի տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
16. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
17. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
18.կարդում, կարողանում է բացատրվել որևէ օտար լեզվով:

7.ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

19. պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.
20. ըստ անհրաժեշտության իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով չսահմանված այլ լիազորություններ.
21. ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):
22. մասնակցում է համայնքի ավագանու նիստերին՝ վարողի իրավերով:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 164-Ա

ՀՈՎՆԱՆ ԲՈՐԻՍԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 7-ի թիվ 23-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 16062020-06-0066 և 2023 թվականի հունիսի 9-ի <<Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տալու մասին>> թիվ 9 արձանագրությունը՝

Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-045-0173-0026 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0,4 հա մակերեսով արոտավայրը 11000 /տասնմեկ հազար/ՀՀ դրամ վարձավճարով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Հովնան Բորիսի Բեգլարյանին /ծնված՝15.07.1981թ/:
2. Հովնան Բորիսի Բեգլարյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նախազգուշացնել մրցույթի հաղթողին, որ հողատարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հունիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 165-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. նոյեմբերի 29 -ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 87-Ն որոշումը և ԱՁ-ի հայտը՝
Որոշում եմ.

1.Թույլատրել ներքոգրյալ ԱՁ -ին իրականացնելու ոգելից խմիչքի վաճառք. 1/Թումանյան Արամ-գ.Դսեղ 2023թ. հունիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Համայնքապետարանի բյուջե վճարել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. հունիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 166-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ, ԽՈՏՀԱՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով,որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Դսեղ գյուղի հողային բարեփոխումներիև սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22 ապրիլի 1991թ. N 6 որոշման արձանագրության քաղվածքները, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի անշարժ գույքի գործակալության կողմից տրված հողամասերի և շինության հատակագծերը, ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գործ N 140 (սեղանամատյան՝ 1914) և Դսեղ գյուղի բնակիչ Նվեր Հովիկի Ղազարյանի /մուտք՝ 09.06.2023թ. թիվ 314/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Գրետա Արտեմի Ղազարյանի /ծնված՝ 13.11.1943թ./,Նվեր Հովիկի Ղազարյանի /ծնված՝ 23.02.1970թ./ և Մարինե Յուրիկի Քոչարյանի / ծնված՝ 24.07.1970թ./ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, փողոց 50, տուն 4 հասցեում 06-035-0057-0011 ծածկագրում գտնվող 114.0 քմ բնակելի տան, 18.70 քմ մակերեսով բնակելի տան բ/պ, 60.70 քմ մակերեսով բնակելի տան նկուղի, 1.40 քմ մակերեսով սանհանգույցի, 27.0 քմ անասնաշենքի, 7.70 քմ անասնաշենքի բ/պ, 20.30 քմ պարիսպի և 0,06924 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:
2. Վերականգնել և ճանաչել Գրետա Արտեմի Ղազարյանի /ծնված՝ 13.11.1943թ./,Նվեր Հովիկի Ղազարյանի /ծնված՝ 23.02.1970թ./ և Մարինե Յուրիկի Քոչարյանի /24.07.1970թ./, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Դսեղ, 06-035-0134-0024 ծածկագրում գտնվող 0.49456 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

3. Վերականգնել և ճանաչել Գրետա Արտեմի Ղազարյանի /ծնված՝ 13.11.1943թ./, Նվեր Հովիկի Ղազարյանի /ծնված՝ 23.02.1970թ./ և Մարինե Յուրիկի Քոչարյանի /24.07.1970թ./, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 06-035-0136-0110 ծածկագրում գտնվող 0.57824 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
4. Վերականգնել և ճանաչել Գրետա Արտեմի Ղազարյանի /ծնված՝ 13.11.1943թ./, Նվեր Հովիկի Ղազարյանի /ծնված՝ 23.02.1970թ./ և Մարինե Յուրիկի Քոչարյանի /24.07.1970թ./, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 06-035-0137-0019 ծածկագրում գտնվող 0.24568 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
5. Վերականգնել և ճանաչել Գրետա Արտեմի Ղազարյանի /ծնված՝ 13.11.1943թ./,Նվեր Հովիկի Ղազարյանի /ծնված՝ 23.02.1970թ./ և Մարինե Յուրիկի Քոչարյանի /24.07.1970թ./, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Դսեղ, 06-035-0163-0009 ծածկագրում գտնվող 0.88681 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:.
6.06-035-0071-0029 կադաստրային ծածկագրում գտնվող բնակելի տանը և հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գյուղ Դսեղ, 50-րդ փողոց, 4 բնակելի տուն :
7. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
8. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
9. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 167-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 05.01.2022թ. N 13-Ն,29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի առաջարկությունը և Արմեն Սամվելի Շահվերդյանի /մուտք՝ 09.06.2023թ. թիվ 312 / դիմումը՝

Որոշում եմ.

1. Թումանյան քաղաքի 5-րդ փողոցի թիվ 3 բազմաբնակարան շենքի հարակից տարածքում ինքնակամ կառուցված 27,74 քմ արտաքին մակերեսով (23,6 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել, 5-րդ փողոցի թիվ 3 բազմաբնակարան շենքի հարակից տարածքում 2000թ. ինքնակամ կառուցված 27,74քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.002774 հա մակերեսով հողամասով:
3. Թումանյան քաղաքի 5-րդ փողոցի թիվ 3 բազմաբնակարան շենքի հարակից տարածքում բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան, 5-րդ փողոց, թիվ 3/11 ավտոտնակ>> փոստային հասցե:
4. Բնակելի նշանակության ավտոտնակի զբաղեցրած 0.00774 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ռ.Թորոսյանին՝ սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի ՀՀ Կադաստրի կոմիտեի Ալավերդու

սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Թումանյան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Արմեն Սամվելի Շահվերդյանին, օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 168-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Մարց գյուղի բնակիչ Ժան Սպարտակի Գևորգյանի դիմումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,տրված 07.03.2023թ.գրանցամատյանի գրանցում N 749 և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Ժան Սպարտակի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, գյուղ Մարց (ծած.06-071-17-000005) բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,163 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Մարց, 8-րդ փողոց, 15 հողամաս>> հասցե:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 26-ի N 137-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 169-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. նոյեմբերի 29-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 87-Ն ,Թումանյան համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի <<Թումանյան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին>> թիվ 17-Ն որոշումները և ԱՁ -ների հայտերը՝

Որոշում եմ.

1.Թույլատրել ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնել հանրային սննդի կազմակերպում.

1/ Խառատյան Արեն-գ.Դսեղ 2023թ. ապրիլի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/ Զաքարյան Լուսինե-գ.Դսեղ 2023թ. ապրիլի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Համայնքապետարանի բյուջե վճարել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հունիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 170-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված շինության հատակագծերը, Թումանյան քաղաքի բնակիչ Արտաշ Ժորայի Սոխիկյանի կողմից լիազորված անձ Նաիրա Ալեքսանի Քոսյանի / մուտք՝ 20.09.2022թ. թիվ 649/ դիմումը և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Թումանյանի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի, Թումանյան համայնքի, Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0031-0014 ծածկագրում գտնվող բազմաբնակարան շենքի բնակարանին, մակերեսի չափը՝ 62,80 քմ, տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան, 13-րդ փողոց, 8 շենք, 5 բնակարան>> հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 14
ք.Թումանյան